

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ENCYCLOPÉDIE (مجموعه علوم)

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Բ. ՅԵՋԱՆ

ԹԻՒ 1

1998 ՄԱՐՏ 7

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ

ՏԵՐ

ՏՆՕՐԵՆ

Ղ. ԲՈԼՍ

ՍՐԽԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՌ ՎԵՃ. ՍՈՒԼԹԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ — Հանրագիտական Տեղի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Թէ ինչո՞ւ եւ նպատակը

Ն. ԹՈՔԱԹԼԵԱՆ — Ժողովրդական իրաւաբանութիւն

Ղ. ԲՈԼՍ — Ծաղկաբանական — Մանիշակ եւ իր մշակութիւնը

Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ — Ո՞վ է յանցաւորը

Ղ. ԲՈԼՍ — Պարտիզականական — Ծնեքեկ եւ իր մշակութիւնը

ԱՐԱՔՍԻ — Առտնին տնտեսականը — Կապերտներու պահպանում.

— Խցանները անթափանցելի ընել, — Չեռքերու կարմրութիւնը անցնել

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Ղ. ԲՈԼՍ — Գիւղատնտեսական ակնարկներ

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ — Մեր Ծիծաղի բաժինը

ՏԱՆՏԻԿԻՆԸ — Խոհանոցի բաժինը

ԱՐՈՒՆԵՏԱԳԵՏԸ — Արհեստական — Կարծր երկաթները կակղցնել

— Պողպատը մշակելու նոր միջոց մը

ՄԱՀԱԳՈՒԹԵՐ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԹԵՐ

اخترا مطبوعه — ابرالمود جاد، سنده نومرو ٥٤



ԼԷՍԻՎ ՄԱԺԻՔ



LESSIVE MAGIQUE

ԼԷՍԻՎ ՎԷՆԵՒՍ

ԱՌԱՆՑ ԿՐԱԿԻ ԵՒ ԱՌԱՆՑ ԱՃԱՌԻ ՃԵՐՄԱԿԵՂԻՆԱՅ ԼՈՒԱՅՈՒՄ

Դադարից Կառավարութեան հաստատութեամբ արտոնագրեալ արժար եւ ոսկի միտայնիւտ արժանացած

Սոյն աննման գիւտով, ազատեցէք այլ եւս յոգնութիւններէ, աւելորդ ծախքերէ ու ժամանակի կորուստներէ և մանաւանդ ճերմակեղէնները մաշեցնող և ձեռքերու ալ վնասող անպատեհութիւններէ:

Ճերմակեղէններ, բրդեղէններ, սեղանի ու խոհանոցի անօթներ եւ այլն լուալու ու մաքրելու համար, ամենէն ընտիր միջոցն է այս գիւտը, որ մեծ առաւելութիւն մ'ալ ունի հականերխիչ ըլլալով:

Խաբեբայութիւններէ զգուշանալու համար, պահանջեցէք վերեւ դրոշմաճ մարքաները:

Փորձեցէք, բաղդատեցէք, միշտ պիտի գործածէք:

Որոշեալ գներով կը ծախուի Պոլսոյ բոլոր արուարձաններու մէջ:

Կեդրոնատեղիներն են՝ Ղալաթիա Մումհանէ Բիֆաթ խան, թիւ 19, 20 և Պոլիս Ծընտրգլխան խան, թիւ 3, Հ. Արսլանեան և Ս, Էմիրգէ վաճառատունն:

Դաւառաց համար գործակալութիւն կը տրուի, փափաքողները պէտք է գիմեն ընդհանուր Թուրքիոյ, Եգիպտոսի, Պուլկարիոյ, Ռու մանիոյ և Սերպիոյ գործակալին, հետեւեալ հասցէով:

Պ. Սեֆերեան, Մումհանէ, Բիֆաթ խան, թիւ 19, 20

Կ. Պոլիս, Ղալաթիա

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ENCYCLOPÉDIE (مجموعة علوم)

ԼՐԱԳԻՐ

Գրաքննիչ Գիտական

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻՒՐ

1898 ՄԱՐՏ 7

Ամեն օրիկ համար Տարեկան կանխիկ 50 Դանեկան: Օսկար երկուց համար Տարեկան կանխիկ 15 Գրանց: Թղթատարի ծախքը խմբագրության կը վերաբերի: Հասք 40 փարայ:

ԵՐԱՒՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌ ՎԵՋԱՓԱՌ ՍՈՒՆՔԱՆ

Հանրագիտի Բ. Շրջանը կ'սկսինք նախ յայտնելով խորին երախտագիտութիւնն առ Օգոստոսիան Վեհապետ մեր. որոյ ամբողջ Արքայութիւնը Թուրքիոյ մէջ. առանց կրօնի և լեզուի խտրութեան, ամէն ժողովրդոց համար, նորանոր քաղաքակրթութեանց, գիտութեանց, դպրութեանց և արուեստից զարգացմանց ու բարդաւածմանցոսկեղէն շարք մը ու պատմական թուական մ'է:

Մեր Ազգային Հայ մամուլն ալ՝ որ Շնորհիւ մեր Վեհ. Կայսեր, մեծամեծ յառաջդիմութիւններ ունեցած է. պարտի իւր մէն մի նոր ու հանդիսաւոր օրերուն մէջ, վերանորոգել առ իւր յառաջդիմասէր Վեհափառ իր ջերմագին շնորհակալեաց և շնորհապարտութեանց խանդավառ զգացումները, իբրեւ ճշմարիտ թարգմանութիւնն առ իւր Հայրախնամ Վեհապետն տածած Հայ Ազգին դարաւոր հաւատարմութեան անկեղծ ու անխախտ սիրոյն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Բ. Շրջանին իւր բազմապետութիւնը յանձնած ենք Տիար Ղ. Բոլատի՝ որ Փարիզի Երկրագործական վարժարանի փայլուն ուսումնաւարտներէն և Բեռլինի ծանօթ Աշխատակիցներէն մին է. իսկ Տնօրէնութիւնը՝ Ազգային ծանօթ վաճառական և գործարանատէր հանգուցեալ Զարգարեան Գէորգ Էֆէնտիի կրէց Որդւոյն՝ ծանօթ Գրավաճառ Տիար Վահան Գ. Զարգարեանի: Բ. Շրջանի Բաժանորդագրութեանց հաշիւք վերաբերելով իւր չ'ունին նախորդ Շրջանի բաժանորդագրութեանց հաշւոյն հետ: Առ այս՝ բացատրութիւնն ստորեւ:

ՁԵԿՈՅՑ ՄԵՐ

Առ մեր Պատուարժան Բաժանորդս և մեղուջան Գործակալ-Թղթակիցս Պրոֆ. Թէ Գաւառացի: —

Մեր անձնական բուն խմբագրութեամբն ու ուղղութեամբն հրատարակուած Հանրագիտի Ա. Շրջանի ամէն բաժանորդք, ընթերցողք պիտի ընդունին իրենց բոլոր պակաս թիւերը: Եւ արդէն սկիզբէն մինչեւ Բ. Շրջանի հրատարակուելիքը տրամադրելի բոլոր թերթերը պատրաստուած և

տարեկանն ալ գրքի ձեռով կազմուե-
լու վրայ է: Մեր լրագրի յապագ-
մանցն և անկանոն ընդհատմանց պատ-
ճառներն արդէն հասկնալի հարկ մը
էր, որուն չքմեղելի լինելը կ'իսնդրուի
ամենէն:

Հանրապետի Ս. Շրջանին մէջ նախ
շարժէ շարժաթ հրատարակուիլ սկսաւ:
ձեռքէ ծախուածները հատը Բի դա-
հեկան: Յետոյ՝ 15 օրն անգամ մը,
և ձեռնածախ հատն՝ երկու դահեկան,
որ աւելի սպառեցաւ: Ս. Շրջանի
թիւերուն մէջ ամփոփուած են Ընդ-
Աւելաց Պատմութիւն անունով ցարդ հրա-
տարակեալ դասագրեանց մէջ պակ-
սած — և այդ պակսածն այսօր լրա-
ցընելը հարկաւոր — Հնդկաց, Չինաց
և Ճաբոնաց Պատմութիւններ, անոնց հին
և նոր քաղաքակրթութիւնքը, և ամե-
նէն աւելի Արեւմտեան թէ Արեւելեան
քաղաքակրթութեան ազդեցութիւնը ընդու-
նուած ու այժմ գործադրելի, դրպ-
րոցական, դաստիարակական կամ ման-
կավարժական բոլոր դրութեանց, այն
է ամէն ուսմանց մէն մի ճիւղը դա-
սաւանդելու յատուկ մէթոտներուն,
դպրոցները արդի մանկավարժական
կազմակերպութեանց համաձայն վա-
րելու բոլոր կերպերը, բոլոր օրէնք-
ները, իրենց հին թէ նոր մանկավար-
ժութեանց պատմութեամբն հանդերձ:
Այնպէս որ Հանրապետի Ս. Շրջանին
սոյն վերջին մասը պարտաւոր են կար-
դալ և իրենց իբրեւ հարկաւոր դա-
սագիրք ունենալ ամէն անոնք՝ որք
են և պիտի լինին Ազգային դաստիա-
րակ, Ուսուցիչ, Տնօրէն, Հոգաբար-
ձու, Թաղական և Ուսումն. Խորհրդ-
ոց կամ կրթական ո՛րեւէ Մարմնոյ
անդամ: Ամէն ծնողք՝ որ կրթութիւն
զաւակ ունին, և ուսանողք՝ որք դպրոց
պիտի յաճախեն. զայն կարգալու են:

Ահա, ինչ որ՝ իբրեւ Ազգային 30 ա-
մեայ ուսուցիչ և Ազգային Մամլոյն իր-

բեւ նորեկ ներկայացուցիչ, կրնայինք
լեցնել այն մեծ պատիւ կամ փառք:
Այս զոր ցարդ թողած են հին թէ նոր
ուսուցիչք թէ Ուսումն. Խորհրդոց
հրատարակած դպրոցաց կանոնա-
գիրքն ու ուսմանց ծրագիրքը. որոց
համեմատ այսօր կ'վարուին մեր Ազգ-
բոլոր վարժարանք:

Հանրապետի այս վերջին կարեւոր
ու նոր մասը՝ նախորդ Շրջանի բաժա-
նորդաց խրկելէ զատ, մաս առ մաս՝
առանձինն եւս պիտի հրատարակուի.
բաժանորդ չեղողներն ալ օգտուե-
տելու համար:

Հանրապետի սոյն առաջին Շրջանին
բոլոր մանրամասնութիւնք Կ. Պոլիս,
Մէրճան-Չարչը, — ծանօթ Ազգ. Գրա-
վաճառ — Տիար Վահրամ Մարգար-
եանի խղճամիտ խնամոց յանձնած ենք:

Ուսումն, Խորհուրդէն ալ կ'իսնդրուի
որ սոյն մանկավարժական դասագրքին
ընթերցումը պարտաւորիչ ընէ, և այլ-
եւս, անոր համաձայն յաջող քննու-
թիւն մը տուողը միայն կարգուի Ազգ-
դպրոցաց օրինաւոր վարիչ կամ ու-
սուցիչ:

Ինչպէս որ սոյն կարեւոր երկասի-
րութեամբ՝ մեր Ս. Շրջանին հաշիւին
հաշիւը գոցած պիտի լինինք. մեր
բաժանորդք ալ իրենց հաշիւին հա-
շիւը փութացնել պարտին ամենայն
սիրով:

Ուրեմն Հանրապետի Ս. Շրջանին հետ
հաշիւ ունեցողք պարտին դիմել ի
Մարգարեան գրատուն, և հոն տա-
կալ առ տակալ գոհանալ և գոհա-
ցընել: Բ. Շրջանի հաշիւք կ'վերաբե-
րին նոր խմբագրապետ Տիար Ղ. Բո-
լատի և նոր Տնօրէն Տիար Վահան Գ.
Չարգարեանի:

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏԵՐԵՆ

«Հանրագիտակ»

ԹԷ ԻՆՉՈՒ

Թէ ինչո՞ւ այս հրատարակութիւնը հրատարակ կ'ենենք մեզ աշակից ունենալով համակիրներու խմբակ մը, ձեռնարկելով Հանրապետական հրատարակութեան Տարիներով կըրկնուած բանաձեւի մը պէս, չի պիտի կրկնենք թէ մենք այս հրատարակութենէն շահ չենք ակնկալեր, կը սպասենք այս վերջինը, առանց խնայելու ջանք և աշխատութիւն՝ Թերթերնիս փայլուն և օգտաւէտ ընելու համար, մեր յարգելի հասարակութեան:

Մեծամեծ խոստումներ չենք ընել, ոչ ալ խոշոր ծրագիրներ կը ներկայացնենք մեր ընթերցողներուն, մեր ծրագիրը ու մեր խոստումները կը փափագինք գործնականին մէջ ցոյց տալ:

Մեր նպատակը գիտութիւնը, երկրագործութիւնը, արուեստը՝ գրականին հետ զուգընթաց քաղցնել է:

Հոս՝ այս էջերուն մէջ, ամէն դասակարգի անհատ իրեն համար օգտակար նիւթեր միշտ պիտի գտնէ, երկրագործը իրեն համար կարելիոր խրատներ պիտի լսէ, արհեստաւորը պիտի տեսնէ իր աշխատին յառաջդիմութիւնը, պարտիզպանը իր պարտիզին խորհրդատուն, իսկ գրասէրը՝ գրականութիւնը, Հայ կի՛նն ալ պիտի գտնէ իր առօրեայ կեանքին պիտոյից յարմար յօդուածներ՝ որոնք իրեն համար միշտ օգտակար պիտի կրնան ըլլալ:

Թերթիս վերջը՝ մասնաւոր տեղ մը սահմանած ենք, ուր ամէն հարցումներու պատասխաններ պիտի տրուին: Պատասխանները մասնաւոր խնամով, պիտի պատրաստուին մասնագէտներու ձեռքով:

Մեր յարգելի աշխատակիցներուն, տարեկան մրցանակ մը պիտի հաս-

տատենք, որուն տեսակը պիտի հաշորդենք յառաջիկային:

Թերթիս հրատարակումը ամէն կերպով ապահովուած, կը սկսինք գործի, այն հաւատքով թէ Պատուարժան հասարակութիւնը յուսախար չընենք զմեզ:

Կ. Զ.

ՆՊԱՏԱԿԸ

Յգտակար ըլլալ ընդհանրութեան. սատարել՝ երկրագործ, պարտիզպան եւ արհեստաւոր դասակարգին անոնց աչացը առջեւն պատուել վերջացնելու միանգամ ընդ միշտ մթութեան թմրեցուցիչ վարագոյրը, որուն ետին՝ նահապետական հնաւանդ կեանքի մը տաժանելի ընթացքին մէջ, գործառնութեանց սաղմնային դրութիւններով համակ այդ դասակարգը՝ իր չոր հացիկը կը թաթխէ իր էութեան խորէն դուրս ժայթքած արիւն քրտինքին մէջ, եւ իր ամբողջ կեանքը կը շինէ ատով, կ'արտադրէ անով, եւ անկէ դուրս ամէն ինչ իրեն համար առասպել կամ գերմարդկային յերիւրանքներ են: Իր այդ ընթացքին մէջ իրեն առաջնորդ ունի միայն իր հօրմէն կամ վարպետէն աւանդուած հընամուլ դրութիւններ, որոնք՝ յառաջդիմութեան այս հրաչքներ արտադրող դասուն մէջ, զինքը կարգ մը անյաջողութիւններու տակ ընկձելով, նա կը կարծէ՝ բաղդի խարազանէն հալածուած ըլլալ... եւ կ'երթայ օդի գաւաթին յատակը փնտռել իր ցաւերու Բարբէղը, այրել լափիղեղու իր կենաց ջնջին մնացորդը, երբ իր դասակիցը՝ Եւրոպայի եւ նոր աշխարհի գիտութեան արգասաբեր եւ բարեբաստիկ ասպարիզին մէջ, ամէն օր նորանոր անուններու պաշարներով պարեհ նաւորուած, կ'ապրի՝ պնդեալ յառաջ ընթանալով, առաջնորդութեամբ մատուաններու, հանդէսներու եւ օրագիրներու. որ միեւնոյն օդի գաւաթը կը պարպէ ցմբուր, կենաց նեկտարը ծծած ըլլալու յաւակնոտութեամբ:

Չիկան մեր մէջ այդ օրինակ հրատարակութիւններ, եւ անոնք որ երբեմն դոյութիւն ունեցան, անմատչելի եղան ժողովուրդ դասակարգին, չեմ գիտեր իրենց լեզուով եւ ոճով, թէ պարունակութեանց միջավայրի եւ ճաշակի անյարմարութիւններով. ինչ որ ալ ըլլայ սակայն, իրենց կեանքը դժբաղդաբար խիստ կարճատեւ եղաւ, եւ մեր երկրագործը՝ տգիտութեան մշուշապատ մթնոլորտին մէջ մնաց, միշտ իր արօրի մածին վրայ հակած՝ իր ուժասպառ արտին ըմբոստ անբերրիութեան հանդէպ, եւ արհեստաւորը՝ իր սակին եւ խարտոցին կամ սղոցին եւ քերիչին հաճի վարդապետ մեռեալ դրութիւններու Չինական սահմանափակ եւ յետադէմ ասպարէզին մէջ:

Ձեռք կարկառեւ այդ հիւժող դասակարգին, առաջնորդ հանդիսանալ անոնց, առանց յաւակնոտ դադափարներու, առաջնորդ եւ զօրավիգ ունենալով մեզի ալ նախախնամութիւնը, գիտութիւնը, եւ աջակից՝ Եւրոպական լուրջ հեղինակութիւններ եւ հանդէսներ, պարզել եւ ռամկացնել Եւրոպական գիտութիւնները եւ արհեստներու զաղտնիքները ըստ կարելոյն, օրը օրին հաղորդել նորանոր գիւտերու գրութիւնները, եւ սատարել բարձրացնելու այդ դասակարգը, իր գիրքէն շատ վեր, այս իսկ է մեր ՆՊԱՏԱԿը՝ երբ Հանրապետութիւնը ստանձնելով կը ներկայանանք խոնարհաբար, բայց վստահութեամբ, տառապած երկրագործին, ընկճուած արհեստաւորին, Հայ օրիորդին եւ Հայ տիկնոջ, որոնք ոչ նուազ իրենց բաժինը պիտի ունենան Հանրապետութեան մէջ, սպասելով իրենցմէ փոխարինութիւն մը, բարոյական եւ նիւթական քաջաբերութիւն, որ պէտք է ըլլայ իրենց ՆՊԱՏԱԿԸ: Եւ երբ Հանրապետութիւնը այս նոր ուղղութեան մէջ կը փափաքինք որ, գրասէրը, մանկավարժը, եւ մինչեւ իսկ նոր սերունդի դեռահասներու կայացուցիչներն ալ իրենց կոկիկ բաժինն ունենան, գործին միօրինակ լրջութեան մէջ տաղտուկ չի պատճառելով հանդերձ, իր երփներանգ գոյներով ամէն դասակարգի

քմաց եւ ճաշակին յարմար սնունդներ համեմելով, հանդէսին յարատեւութիւնն ապահովող այդ նիւթական թէ բարոյական գոհացուցիչ փոխարինութիւնը գտնել, եզրակացութիւնն է մեր ՆՊԱՏԱԿին:

Ղ. ԲՈՒՏ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Օրէնքը ժողովրդականացնելու դադափարը՝ դեռ մեր մէջ մուտ գտած չէ. այսինքն մինչեւ այսօր չեն տեսնուած օրինական այնպիսի յօդուածներ, որոնք ուղղակի ժողովուրդին անմիջական պէտքերուն օգտակար ըլլան:

Մենք այս շարաթաթերթին մէջ 1. կարճ, ամփոփ եւ դիւրահասկանալի ոճով յօդուածներ պիտի գրենք ժողովուրդին այն դառակարգին համար, որ ամենէն շատ պէտք ունի, իր առօրեայ գործերուն համար, օրինական ծանօթութեանց. 2. Թուրքիոյ վարչական, դատական կազմակերպութեան վրայ ատեն ատեն ծանօթութիւններ պիտի տանք. 3. Իրաւագիտական այս մասը ընթերցողաց աւելի շահեկան ընելու համար, օտար երկիրներու մէջ տեղի ունեցած դատական այժմէութիւնները, իր ամբողջութեանը մէջ, պիտի ամփոփենք:

Շարաթաթերթիս Պատ. ընթերցողաց դիւրութիւն մը կամ նորութիւն մը ընծայելու նպատակաւ, դատական եւ օրինական ոեւէ խնդրոյ մը համար մեր մասնաւոր կարծիքը, խորհուրդը գրաւոր կերպով, պէտք եղած հարցէին պիտի զրկենք եւ եթէ հարցում ու պատասխան արգելիչ պատճառներ չունենան հրապարակելու, առանց հարցումին տիրոջ անունը մէջ տեղ հանելու. թերթին միջոցաւ պիտի հրատարակուին:

Առաջին յօդուածնիս այս թիւէն
կը սկսինք :

Հ. Թէ ի՞նչպէս վարձատուեն (մուծիր) իր
վարձակալը (միւսթէճիր), պայմանաժա-
մին լրանալուն, տունէն կամ խանութէն
եւայլն կրնայ հանել :

Պ. Վարձումին տեսակին համեմատ, օ-
րինական տրամադրութիւնները կը տար-
բերին :

Եթէ վարձումը գրաւոր եւ պաշտօնա-
կան ըլլայ, եւ պայմանաժամն ալ լրանալէ
յետոյ՝ վարձակալը այլեւայլ առարկու-
թիւններով տունէն կամ խանութէն չու-
զէ ելլել, վարձատուեն՝ առանց դատարա-
նի դիմելու, նօտարի (մուգաւիշլաթ մու-
հարիւրի) միջոցաւ մինչեւ 15 օր ելլելու
համար վարձակալին ազգարարագիր (իս-
թարնամէ) մը կը խրկէ. եթէ վարձակալը
մինչեւ 15 օր չ'ելլէ, այն ժամանակ, տու-
նին կամ խանութին գտնուած տեղւոյն
նախնական դատարանին (հուգուգի ճիւ-
ղը) նախագահին հրամանաւ, Գործադիր
իշխանութեան պաշտօնէայք (իճրա մէ-
մուրլարը) եւ ի պահանջէ հարկին, ոստի-
կանութիւնը՝ անմիջապէս տունը կամ խա-
նութը վարձակալին ձեռքէն առնելով վար-
ձատուին կը յանձնեն :

Սակայն եթէ վարձումի պայմանագիրը
պաշտօնական չըլլայ, այսինքն եթէ պէտք
եղած դրոշմաթուղթերը փակցուած չըլ-
լան, գարձեալ վերոյիշեալ եղանակաւ,
վարձակալը տունէն կամ խանութէն կրնայ
հանուիլ, սա պայմանաւ որ՝ օրինական
տուգանքը դիմում եղած պահուն վճա-
րուի :

Իսկ եթէ վարձումը բերանացի եղած
ըլլայ, այն ատին առանց դատարանի դի-
մելու եւ վճագիր (իլամ) մը ստանալու,
վարձատուեն իր վարձակալը չը կրնար տու-
նէն կամ խանութէն հանել :

Վարձակալը օտարահպատակ եղած պա-
րագային՝ ազգարարագիրը հիւպատոսա-
րանի միջոցաւ վարձակալին կը խրկուի՝ եւ
միանգամայն տունէն կամ խանութէն հա-
նելու համար Գործադիր իշխանութիւնը
հիւպատոսարանէն պաշտօնէայ մը կը հրա-
ւիրէ ներկայ գտնուելու համար :

Ըսինք նաեւ թէ Օսմանեան հպատակ-
ներու միջեւ եղած այս տեսակ ձեւակեր-
պութիւնները (թախլիէ) կալուածին գըտ-
նուած տեղւոյն նախնական դատարանին
(պիտայէթ մահքէմէսի) կցուած գործա-
դիր իշխանութեան կողմէ կը կատարուին,
մինչդեռ օտարահպատակ վարձակալներու
համար, ձեռնհաս գործադիր իշխանու-
թիւնը Ատրիէի պաշտօնատան մէջ գըտ-
նուած Բէճարէի Իճրա Գալէիէն է :

Ն. ԹՈԳԱՅԼԵԱՆ

ՄԱՂԿԵԲԱՆԱԿԱՆ ՊԷՍՊԻՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻՇԱԿ ԵՒ ԻՐ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Ո՞վ չի ճանչնար այդ գեղանոյշ ծաղի-
կը, որ խոնարհութիւն եւ պարկեշտու-
թիւն կ'արտաբուրէ ամբողջ հրապոյրնե-
րով լեցուն. որ գարնան հետ մէկտեղ ա-
ճապարանօք կուգայ ողջունել զաշխարհ,
արեւուն առաջին ճառագայթներուն հետ
փթթելով, կ'անցնի՝ կ'երթայ փափկակեաց
կուրծքերու վրայ անուշ յիշատակներ ձը-
գելով... Ամէն ոք կը սիրէ զայն, այն-
պէս չէ՞, ամէն ոք կը ցանկայ հոռոտել
իր հեշտարոյր թերթիկները. խրճիթին
աղջիկը՝ ինչպէս ապարանքի տիկինը,
պչրասէր կնոջ հետ անձկանօք կ'սպասեն
անոր գալտեան : Հեռու սակայն քաղքե-
նի ժխտէն, անտառներու մէջ, բարձր-
բերձ եւ ոստախիտ ծառերու զովըմբեր
հովանոյն տակ, կը պահուըտի իր տերե-
ւիկներուն մէջ գլխիկը ծռած, կամ կը
բարձրանայ իր կոթունին վրայ, դողդոջուն
ամօթխածութեամբ մը, սռանց մարդկա-
յին ձեռքի խնամն եւ օգնութիւնը վայե-
լելու : Ո՛րչափ պարզ է իր կեանքը. բայց
ո՛րչափ դժուար, երբ ուզենք զայն խնա-
մել, մշակել մեր մօտը, մեր բուրաստան-
ներուն մէջ : Բայց գիտէ համակերպիլ :
Հոն ոչինչ կ'ուզէ, հոս՝ շփացած աղջկան
մը պէս հազար տեսակ խնամներ կը պա-
հանջէ : Եւ սակայն, բուրաստաններու
պճնազարդութեան համար, մանիշակը

բազմազան պարագաներու մէջ մեծ յարմարութիւն կը ցուցնէ, ուր՝ ուրիշներ նուազ յաջողութիւն պիտի գտնէին: Արուեստական անտառակներու յատակը զարդարելու, անոնց չրջապատը եզերելու, մարմանդները, զառիվայրերը, բլրակներու հարթասարերը կամ անոնց կուշտերը զարդարելու ո՛րչափ վայելչօրէն կը պատշաճի. հապա գեղեցիկ սեռի կուրծքերը՝...: Ամէն ծաղիկ՝ այսչափ բարեմասնութիւններ մէկէն չունի. բուրաստաններու համար ասիքն է այն: Տեսէ՛ք հիմա, քիչ մը ուշադրութեամբ, շատ դիւրին կերպով կրնաք մշակել զայն, քաղքենի կեանքին վարժեցնել, կ'ուղէի ըսել: Մանիշակը շատցնելու համար, պէտք է իր արմատը բաժնել, կամ աւելի լաւը, իր կողէն ծռած վիժանուտները (Ֆիլիզ) բրցնելով տնկել. որոնք ձմեռն արդէն արմատաւորուած են, եւ յարմարութիւն ունին լաւ բուսնելու, եւ ընտիր տունկեր կազմելու: Ընդհանրապէս այդ վիժանուտներէն 2—3 հատը կը միացնեն եւ այնպէս կը տնկեն, երբ մայր տունկը ծաղկելէ դադրի: Առաջուց պէտք է պարտէզին մէջ, յարմար տեղ մը՝ ածու մը պատրաստել խնամով, որու հողը ըլլայ աւազախառն, կակուղ, փխրուն եւ աղբուած՝ կովու փտած աղբով: Ածուին երկայնութեանը 25էն 30 հարիւրամէթր հեռաւորութիւնով գիծեր բանալ, եւ այդ գիծերուն վրայ՝ միշտ 25—30 հարիւրամէթր միջոցներով ծակեր բանալու է քնկաւ (պարտիզպաններու փայտէ գործի մը, որուն մէկ ծայրը իր կլորութեամբ բարակցած է, եւ մէջքէն՝ գրեթէ կիսով չափ բութանկիւնաձեւ կորացած, տեղացի պարտիզպանները քաշելով կը կոչեն), եւ տնկելու է այդ գործիքով, առանց արմատներուն վրայ ուժով կոխելու: Այս հեռաւորութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ՝ երբ աւելի մօտ տնկուին եւ եղանակները խոնաւ երթան, տունկերը շատ տերեւ կը բուսցնեն, որով միջուկները խեղդուելով, կ'ամլանան եւ չեն ծաղկիր: Մանիշակը դանդաղ կերպով կ'արմատանայ. այս պատճառաւ պէտք է զգուշանալ գործիքով հողը բրելէ, — ար-

մատները չի շարժելու համար, — այլ պէտք է աւելի ածուին երեսը մանր յարդով ծածկել, եւ ամառը կարելի եղածին չափ շատ քիչ ջուր տալ: Հետեւալ տարիները պէտք է տարին անգամ մը ածուին երեսը մանր յարդով ծածկել, եւ ամառը 2—3 անգամ բրել, օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներու մէջ ալ ջրել, եթէ օդը չոր ըլլայ: 3—4 տարին անգամ մը պէտք է վերսկսիլ տնկումը:

Միաթերթ (եալընգաթ) ծաղկով մանիշակները կարելի է նաեւ ցանելով ալ հասցնել: Այս պարագային մէջ, պէտք է պատրաստել մասնաւոր տնկարան մը (պըզտիկ ածու մը զոր օրինակ), եւ ծաղկին հունտը քաղելէն անմիջապէս վերջը ցանել զուգահեռաձեւ ակօսիկներու մէջ, որոնք կ'ընծիւղին հետագայ դարնան: Երբ բաւական խտրնան, կրկին հանելու եւ ուրիշ տնկարանի մը մէջ տնկելու է իւրաքանչէր քիչ մը հեռի. եւ երկրորդ դարունին վերջնականապէս իրենց որոշուած տեղը կը տնկուին: Սերմանումով յառաջ եկած մանիշակները աւելի ուժեղ, ուռձուն եւ բազմածաղիկ կ'ըլլան, քան ուրիշ կերպով աճածները: Սերմանումը յարմար է մասնաւորապէս խստերակ մշակութեանց (քիւլթիւս Փօսսէ, արհեստով տունկ մը, իր սովորական ժամանակէն առաջ ակամայ ծաղկեցնել, կամ պտղարեւել) սահմանուած տունկերուն, որոնք ժամանակէն առաջ կանխախայրիններ (Բարֆաւա) պիտի հասցնեն, պարահանդէսի խրախճանաց ամիսներուն մէջ, գնդածիր կուրծքերը դեղազարդելու համար: Բայց որովհետեւ սերմանումով յառաջ եկած տունկերուն մէջն շատերը կ'այլանոսին, ուշադրութեամբ զատելու նետելու է դէպքերը:

Եւրոպացի ծաղկաբանները գոհ չի մնալով սակայն բնութեան տուած միօրինակ մանիշակի տեսակէն, գիտութեան եւ արուեստին ուժով յառաջ բերած են շատ մը տեսակներ, մէկգմէկէ աղւոր եւ հրապուրիչ. եւ ասոնցմէ շատերը այնպէս ըրած են, որ տարւոյն մեծ մասին մէջ անդադար կը ծաղկին, եւ կը կոչուին ցան-

գաճուն (ետիլէրէն) մանիշակներ. ասոնց գլխաւորներն են՝

Յանգաճուն վաղահաս մանիշակ կապոյտ ծաղիկով. — Violette à 4 saisons hâtive à fleurs bleues.

Յանգաճուն մանիշակ Զար սպիտակ ծաղիկով. — Violette à 4 saisons le Czar blanc.

Յանգաճուն մանիշակ յիշատակ Հայր Միլէի. — Violette à 4 saisons souvenir de Millet père.

Յանգաճուն Բարմայի սովորական մանիշակ. — Violette à 4 saisons de Parme ordinaire.

Յանգաճուն Բարմայի Մառի-Լուիզ մանիշակ. — Violette à 4 saisons de Parme Marie-Louise.

Յանգաճուն մանիշակ Սվէյլէյ Հուայլ. — Violette à 4 saisons de Swanlay While, Լայլն:

Այս չորս եղանակներու մանիշակները ահա, խստերակ մշակութեամբ ծածկոցներու (ետիլէրէն, տեղացի պարտիզպաններու լեզուով) կամ ջերոցներու (ոչ ու, ճամէքեան) մէջ հասցնելով, օգոստոսէն սկսեալ մինչեւ յետագայ տարուան մայիս եւ յունիս ամիսները կը ծաղկին շարունակաբար, որոնց ամենէն յարգի ժամանակը, ինչպէս ըսինք աւելի դեկտեմբերէն մինչեւ մարտ ամիսն է:

Տուններու, ապարանքներու, պարտէզներուն մէջ երբ ունիք ծածկոցներ կամ ջերոցներ, կրնաք պղտիկ հոգածութիւններով ձմրան եղանակին, այդ հաճոյսի ծաղիկները հոստտել: Յանգաճուն տունկերու պատրաստութիւնը, շատ չի տարբերիր բացօդեայ մշակութենէն: Պարզ մշակութեամբ յառաջ եկած զօրաւոր եւ առողջ տունկերուն վիժանաւորները, որոնց միջուկը լաւ կազմուած է եւ նախորդ ձմեռը արմատաւորուած. միեւնոյն կերպով տնկելու է, ինչպէս ըսինք վերը: Եւ միեւնոյն խնամքները տալու է մինչեւ օգոստոս: Այս միջոցին՝ մանիշակի տունկերը կ'սկսին հետզհետէ շատ մը վիժանաւոր արտադրել, զորս պէտք է խնամով ջնջել: Նկատողութեան առնելու գըլ-

խաւոր կէտ մ'է այս, որ մայր տունկին միջուկը խոշորցնելով, ապագային շատ ծաղիկ կուտայ, եւ եթէ անհոգութիւն ընէք հակառակը տեղի կ'ունենայ, եւ տունկը կ'ամլանայ:

Հոկտեմբերի սկիզբները, երբ ցուրտերը կ'սկսին տակաւ զգալի ըլլալ, պէտք է պատասպարել տունկերը: Շատ միջոցներ կան, որոց ամենէն պարզը՝ տեղւոյն վրայ ծածկոցներով գոցելն է, որ տունկերը տեղափոխուելով չեն վնասուիր, եւ այս պատճառաւ ուրիշ միջոցներէ աւելի ծաղիկ կ'արտադրեն: Այս պարագային մէջ՝ ածուները պէտք է պատրաստել գարնան ժամանակ, ճիշտ ծածկոցի սնտուկներուն մեծութիւնով, (ուրիշ առթիւ պիտի խօսիմ ծածկոցներու վրայ, որոնք ամէն կարգի կանխախայրներու մշակութեանց համար մեծ կարեւորութիւն ունին, որ սակայն՝ մեր պարտիզպաններու շատերուն անծանօթ է), եւ իւրաքանչիւր ածուին մէջ միայն 5—6 կարգի վրայ կը տնկեն:

Տուններու փոքր պարտէզներու մէջ, քիչ քանակութեամբ մանիշակ խստերագելու համար, կարելի է թաղարներու մէջ տընկել զանոնք, եւ տեղաւորել այսպէս ծածկոցի տակ: Այս միջոցով պէտք եղածին չափ եւ ուզուած ատեն, կարելի է զանոնք տաք տեղ մը տանիլ, եւ շարունակաբար ամբողջ ձմեռը վայելել այդ խոնարհ ծաղկին հեշտանոյշ բաւրումները:

Ղ. ԲՈՒՍ

Ո՛Վ Է ՅԱՆՁԱԻՈՐԸ

Ամէն անգամ երբ առ ի թը ներկայանայ, միշտ մեր տղաքները կը դատապարտենք՝ իրր անկիրթ, որիկայ և անպարկեշտ:

Սակայն ամէն անգամ կը սխալինք՝ երբ յանցաւորը անոնք նկատենք, իրաւ է որ մեր զաւակները պարկեշտութեան տիպաւորներ ըլլալէ շատ հեռի են, բայց մենք ալ պահանջելու շատ իրաւունք չունինք:

ինչո՞ւ սպասենք անոնցմէ, երբ տակաւին մենք բարոյականի բարձր սկզբունքները չենք ըմբռնած:

Ի՞նչ պահանջներ, քանի որ չենք ցանած:

Հէգ տղաքները՝ ամէն օր, ամէն վայրկեան, հազարաւոր տեսակ հայոյանքներ կը լսեն մեզմէ, շատ մը յուր տեսարաններու ականատես կըլլան, ու շատ մը սոգոմական նկարագրութիւններ կը լսեն: Անոնք կը տեսնեն իրենց հայրը և կամ եղբայրը գինով ցած դրութեան մէջ, (որոնք չեն գիտեր թէ ինչ կը խօսին), կը լսեն իրենց մայրերէն՝ դրացիներուն ապօրինի յարաբերութիւնները, և ուշագիշտ կը գիտեն թղթախաղի սեղանը:

— Ըսէք, իրաւունք ունի՞նք քաղելու, քանի որ չենք ցանած:

Շատ անգամ ականատես եղած ենք ուսուցիչներու՝ որոնք գինեւորան մէջ իրենց քովիկ առած, մատաղ աշակերտներ, անոնց ուրախ երգեր երգել կ'ուտային, երբեմն իրենց կողմէ աւելցնելով հայոյանքներու տեղատարափ մը:

Ե՛րբէ՛ք, կ'աղաչեմ, ասոնք լաւ ազդեցութիւն կ'ընեն մեր զաւակներուն վրայ:

Եւ ինչո՞ւ պահանջներ որ անոնք պարկեշտ ըլլան, քանի որ մենք շատ հեռի ենք այդ սահմանէն:

Չը ձանաթ, քաղել չի պահանջինք, Ուղղի՛նք մեր սխալները:

Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

ՇԵՐԱՄԱՌՈՅԾՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Յառաջիկայ թերթերուն մէջ, Հաւաքի-ապի աշխատակից գիտնական և անուանի երկրագործ-ճարտարագէտ մը, շերամատուները հակահիւսելու (disinfecter,

մաքրել) միջոցներուն վրայ պիտի խօսի, և պիտի պարզէ բոլոր այն պատճառները, որ անցեալ տարուան աննպաստ օգերէն, շերամի բերքերը աւրուելով, ակնկալուած յաջողութիւնը չունեցան, և հետզհէտէ պիտի բացատրէ դարմանները այդ տեսակ պարագաներու մէջ:


ՊԱՐՏԻԶՊԱՆԱԿԱՆ

ԾՆԾԱՅԻ (Ասքէռ, գուօ գոմագ)

ԵՒ

ԻՐ ՄՇԱՆՈՒԹԻԹԻԻՆԵՐ

Երկար տեսներէ ի վեր Եւրոպայի մէջ մեծ կարեւորութիւն ստացած ըլլալով այս օգտակար բանջարեղէնը, իր բաղադրութիւնով արիւն մաքրելու յատկութիւնը ունի. որ, դարնան առաջին օրերուն հետ, երբ բանջարեղէնները հրապարակի վրայ կը պակսին, իր նախախայրին (խորճանք) կուտայ հասարակութեան:



Հոլանտական ծներէկ

Քանի մը տարիներէ ի վեր Պոլսոյ մէջ ալ սկսաւ այս խաւարիչը (սէպլէ) կարեւորութիւն ստանալ եւ փնտռուիլ, ուստի՝ յարմար դատեցինք անոր մշակութեան վրայ մանրամասն տեղեկութիւններ տալով. պարտիզպաններուն ուշադրութիւնը

հրաւիրել, որ կարգ մը բանջարեղէններէ աւելի շահարե՛ր է:

Ծներեկը տեղական եւ մշտակենցաղ (շատ ապրող) տունկ մ'է, որ պարզ, ուռուցիկ եւ բազմաթիւ արմատներ ունի, որոնց ամենուն մէկէն մօտէ (griffe) անունը կուտան: Այս մագիլէն կը ծնին գարնան շատ մը մսուտ եւ սպիտակաթոյր բողբոջներ, (այս բողբոջներն են որ կ'ուտուին) որոնք մէկէն մինչեւ 1,30 մէթր բարձրութեան կը հասնին ուղղաձիգ, ուղորկ եւ թեթեւապէս խաժագոյն կ'ըլլան, խիստ մանր գլանաձեւ տերեւներով, որոց մէջ կ'երեւան կանաչագոյն դեղնորակ եւ մանր կախուած ծաղիկներ: Այս վերջիններուն կը յաջորդեն ոլուի մեծութեամբ գնդաձեւ պտղահատեր, առաջուց կանաչ, բայց աշնան մօտ խիստ արտայայտիչ խճրուկի (գէնճէֆրէ) կարմիր գոյն մը կ'առնուն: Պտղահատերուն մէջ գտնուած հունտերը սեւ եռանկիւնաձեւ են, բաւական խոշորկեկ. 50 հատը վեր ի վերոյ 1 կրամ կը կշռէ, եւ իրենց ծլելու յատկութիւնը առնուազն 5 տարի կը տեւէ, եթէ լաւ պահուին:

Գլխաւոր տեսակները. — Ի միջի այլոց, ամենէն յարգինքն են հետեւեալները.

Հաւանական մանչակաւոր ծնէթէլ. — Ասոր բողբոջները խոշոր, հաստը եւ ծայրերը աւելի կլորցած, վարդագոյն կամ թեթեւապէս մանիշակագոյն կարմիր կ'ըլլան:

Այս տեսակը ամենէն աւելի շատ մշակուածն է:

Առաջնային կանաչաւոր ծնէթէլ. — Այս գեղեցիկ տեսակը՝ որ Հոլանտական ծներեկի հունտերու սերմանումով եւ գերընտրութեամբ — ուրիշ առթիւ պիտի խօսինք թէ՛ գերընտրութեամբ ինչպէս կարելի է սեւէ տունկէ մը նոր տեսակներ յառաջ բերել — ստացած են: Բարիզի շուկային մէջ ամենէն յարգին է, եւ շատ կը փրնտուի, իր բողբոջներու արտասովոր խոշորութեան եւ փափկութեան համար:

Այս երկու գլխաւոր տեսակներէն զատ կը մշակեն նաեւ տեղ տեղ հետեւեալները: — Սփրայական կամ կանաչ ծնէթէլ, որ

վայրի ծներեկին կը մօտենայ իր յատկութիւններով. — Գերմանական «դիպի» ծնէթէլ, Հոլանտականին շատ մօտ, եւ կը կարծուի որ անկէ սերած ըլլայ. — Առաջնային կամ «հաւ» ծնէթէլ, որ իր ուշ հասունալուն համար կարեւոր տեղ մը կը բռնէ:

Մշակութիւն. — Ծներեկի ընտիր հունտ ճարելը շատ դժուար է, ուստի՝ երբ անգամ մը կըրցաք աղէկ հունտ գտնել եւ անոնցմով ծներեկարան մը հաստատել, ջանացէք ձեզի պէտք եղած հունտերը դուք պատրաստել այնուհետեւ (*):

Առժանթէյլի (Բարիզի մօտ) եւ իր շրջականերու պարտիզպանները ծներեկի ընտիր տեսակ հունտեր կը պատրաստեն թէ՛ եւ, բայց չեն ծախեր, այլ կը պահեն իրենց՝ որ տնկելով մագիլներ կը հասցնեն եւ կը ծախեն: Այդ կողմի պարտիզպանները այս մագիլներու վաճառականութեան կը պարտին իրենց հարստութեան մեծ մասը: Կը տեսնէ՞ք թէ ո՛ր աստիճան շահաւէտ է ծներեկի մշակութիւնը. ինչո՞ւ Պոլսոյ շրջականերու պարտիզպաններն եւ ագարակապանները չ'զբաղին անով, որ հետզհետէ, ինչպէս ըսինք, Պոլսոյ մէջ ալ կարեւորութիւն կ'ստանայ, մինչեւ իսկ եթէ Պոլսոյ հրապարակին վերայ սպառում չի գտնեն, կրնան արտասահման շրջել, որ միշտ կը փնտռուի, մասնաւորապէս Ռուսիոյ հրապարակին վրայ, ուր արդէն մեր պարտէզներու բերքերուն մէկ կարեւոր մասը գոհացուցիչ գիններով կը ծախուի: Գարթալ եւ իր շրջակաները, Եալովա, Պարտիզակ, Ատարազար եւայլն իրենց կլիմայով եւ հողերով մեծ յարմարութիւն ունին ծներեկի մշակութեան, եւ կը յանձնարարենք իրենց յատկապէս այս օգտակար բանջարեղէնին շահաւէտ մշակութիւնը:

Սերմանում. — Մարտի 15էն վերջ, պարտէզին մէկ յարմար կողմը ածու մը պատրաստեցէք, զայն խորունկ կերպով հերկելով. ածուն հերկուած ժամանակ պէտք է թաղել առատօրէն կիսով չափ

(*) Համազգիսակի խմբագրութիւնը պատրաստ է եւրոպական ընտիր բանջարեղէններու հունտեր բերել տալ, եթէ բաժանորդներէն ուզողներ ըլլան:

փտած աղբ. երբ հերկը լրանայ, ածուխ չտկեցէք իր եզերքներու հողերը վեր առնելով, որ քառանկիւնի փոսի մը ձեւը կ'առնէ, որպէս զի ջրուած ատեն ջուրը իր մէջը մնայ: Այսպէս պատրաստուելէն վերջը ածուխն երկու ծայրերուն վրայ կարգաւ 30 հ.մէթր հեռաւորութեամբ պլտիկ ցիցեր տնկեցէք եւ դիմացէ դիմաց բարակ չուանով իրար միացուցէք: Այդ չուաններուն ուղղութեամբ եւ 3—4 հարիւրամէթր խորունկ ակօսներ բացէք, չուանը վերցուցէք եւ անոնց մէջը 1 հարիւրամէթր «դէրէ» (terreau, հող դարձած, փտած եւ փոշիացած աղբ) դրէք. եւ անոր վրայ իրարմէ 2—3 հարիւրամէթր հեռաւորութեամբ հունտերը ցանելէն վերջը՝ ծածկեցէք կրկին աղփուտով. եւ յետոյ ամբողջ ածուխն երեսը մանրուած ձիու աղբով ծածկեցէք:

Երբ օդերը չոր երթան, յաճախ ջրելու է որ աղէկ բուսնին, եւ շարունակելու է այսպէս մինչեւ որ բոյսերը բաւական զօրանան: Վայրի եւ օտար բոյսեր երբ ծնեբեկէն առաջ բուսնին, պէտք է զանոնք խնամով մաքրել: Եւ ծնեբեկի տունկերը երբ աղէկ մը զօրացած ըլլան, այսինքն 2—3 հարիւրամէթր բարձրութեան հասած ըլլան, պէտք է նօսրցնել, այնպէս որ մնացածները իրարմէ 4—5 հարիւրամէթր հեռաւորութիւն ունենան: Այս միջոցին կրնաք թեթեւ կերպով փորել. եւ, եթէ կայ՝ օտար բոյսերը նորէն ջնջել:

Տունկերը 10 հարիւրամէթր բարձրութեան հասնելուն պէս, աւելի ուժով բրնցէք (չաբալամագ), եւ ծածկեցէք ածուխ մանր յարդով, որուն հետ եթէ քիչ մը գաճ (աւել) կամ մոխիր խառնէք աւելի աղէկ կ'ըլլայ: Գաճը մոխիրէն աղէկ է: Ինչպէս ըսինք, տունկերը առոյգ եւ զօրաւոր ըլլալու համար, պէտք է որ հողը առաւորէն աղբուած ըլլայ. եւ ամբողջ տարւոյ՝ երբ պէտքը զգացուի, ջրել առատօրէն, եւ շարունակ բրնկով ածուխ մաքուր պահել:

Հետագայ գարնան, տունկերը արդէն բաւական զօրացած ըլլալով կարելի է զահոնք իրենց տեղը տնկել. ասիկա ապա-

հովապէս կրնայ ըլլալ՝ երբ վերը յիշուած պայմանները ուշադրութեամբ գործադրուած ըլլան: Թէեւ յաւարտիզպաններէ ու մանք կը յանձնարարեն մագիլները 2—3 տարուան եղած ատենը տնկել, բայց այս դրութիւնը աղէկ չէ. որովհետեւ առաջին տարին տունկերը աղէկ խնամելով եւ հետագայ տարին տնկելով, թէ ժամանակ կը չահիք թէ տունկերը իրենց վերջնական տեղը հաստատուած ըլլալով՝ հոն կ'արմատաւորին: Ծնեբեկի մագիլները շատ դիւրաբեկ են, այս պատճառաւ երբ առաջին տարին տեղէն հանէք, արմատները շատ բարակ ըլլալով՝ գրեթէ չեն մնասուիր, մինչդեռ՝ երկրորդ, արդէն հաստեցած ըլլալով երբ հողէն դուրս հանէք. անոնցմէ շատերը կը կոտորտին եւ մագիլներն ալ դժուար կը բռնեն:

Ծնեբեկի մշակութեան վրայ ցնդմանութեան կանոններ. — Ծնեբեկի տնկարկութեան եւ մշակութեան վրայ խօսելէ առաջ, քանի մը գործնական եւ հարկեցուցիչ կանոններ դնենք հոս:

1. Ծնեբեկը ամէն տեսակ հողի մէջ կարելի է հասցնել, բայց կ'ախորժի աւելի կիր եւ շատ կիր պարունակող հողերէ: Այս նիւթին աղղեցութեան տակ է որ արագապէս կ'աճի, տեսակը աղւոր կ'ըլլայ, եւ մանաւանդ փայլուն եւ ազդու գոյն մը կ'ստանայ: Ծնեբեկը կաւային կաշուն հողերէ շատ կը վախնայ, որոնք իրենց ծակտիքներուն մէջ մեծ քանակութեամբ ջուր պահելու յատկութիւնն ունենալով, անոր զարգացման շատ կը վնասեն, եւ երկրորդ, երբ ամառը օդերը շատ չոր երթան, հողը ձեղքաւորով արմատները կը կոտորտին: Կաւախառն, աւազուտ հողերուն մէջ աւելի աղէկ կ'ըլլայ թէեւ, բայց երբ կիր չի պարունակին իրենց մէջ, բողբոջները բարակ կը մնան, եւ աղօտ գոյն մը կը ստանան (*): Առժանթէօյլի ծնեբեկարան-

(*) Երբ կուգէք հոսկնալ թէ ձեր հողը կիր կը պարունակէ թէ ոչ, առէք 10 փարայի ջրածնական բլօթային թու (թուգ րուհու) կամ ծծմբային թու (սաճ եաղը), եւ ձեր արտին մէջ մէկ քանի անգ փորելով քիչ մը մը հող առէք, եւ այդ թուներէն մէկը վրան լեցուցէք, եւ միջոցապէս եռացում յառաջ գոյ փրփուրներով,

ները առ հասարակ գաճի գոցուած հան-
քերու վրայ հաստատուած ըլլալուն հա-
մար, ծնեբեկները արտասովոր կերպով
կ'աճին, եւ կ'ստանան ընտիր յատկու-
թիւն եւ անհամեմատ գոյներ: Բայց այս
ըսելով չեմ ուզեր յուսահատեցնել ա-
նոնք՝ որ կը փափաքին ծնեբեկի մշակու-
թեամբ զբաղիլ, եւ չ'ունին տրամադրելի
հող. որովհետեւ գիտութիւնը անոր մի-
ջոցը գտած է, եւ կարելի է այսօր գրե-
թէ ամէն տեղ մշակել զայն. մինչեւ իսկ
այնպիսի տեղեր՝ ուր ոչ արօր կրնայ բա-
նիլ, եւ ոչ ալ ուրիշ մշակութիւններ ը-
նել չահաբեր կերպով. ինչպէս բլուրներու
կուշտը, զառիթափներ եւայլն: Այս պա-
րագային մէջ, երբ հողերնիդ կաւային է՝
խառնեցէք անոր կիր եւ աւազ, իսկ եթէ
աւազային՝ միմիայն կիր: Ծովեզերեայ եր-
կիրներու մէջ սքանչելի ծնեբեկարաններ
կրնան հաստատուիլ, երբ հողը խառնուած
ըլլայ ծովային աւազով, որովհետեւ այս
վերջինը կը պարունակէ իր մէջ մեծ քա-
նակութեամբ աղ, որ շատ նպաստաւոր
է ծնեբեկի զարգացման, եւ երկրորդ՝ խե-
ցիկներու պատեաններ (միտեա, սորիտեա
եւայլնի խապուխ) որոնց բաղադրութեան
մէջ շատ կիր կայ:

2. Ծնեբեկի սահմանուած արտին երե-
սի հողը փխրուն, եւ տակը՝ կարծր ըլլալու
է. ուստի պէտք չէ երբեք խորունկ փորել:
Տնկարկումէն առաջ մէկուկէս րահի (շէլ)
խորութիւնով եթէ հերկուի՝ կը բաւէ. որ
երեսի հողը աղէկ մը կախուղնալով, ման-
րուելով եւ խոշոր քարերէ մաքրուելով,
յատակը հաստատուն կը մնայ: Եւ այս
յատակի կարծրութիւնը, մշակութեան
յաջողութիւնն ապահովող գլխաւոր պայ-
մաններէն մէկն է. որովհետեւ ծնեբեկը
խիստ շատ արմատներ կ'արձակէ, եւ որ-
պէս զի այդ արմատները ուժով զարգա-
նան, եւ ծնեբեկի գեղեցիկ բողբոջներ
յառաջ բերեն, պէտք է կակուղ հողի մէջ
անանկ տեղաւորուած ըլլան, որ օդի ազ-

գիտցէք որ հողին մէջ կիր կայ: Ըսել է եռացումը որ-
չափ շատ եւ ուժով ըլլայ, այնչափ շատ կիր կը պարու-
նակէ: Փորձած ատեննիդ թիւրին հետ կէս առ կէս ջուր
խառնեցէք:

գեցութիւնը կրեն. ուրկէ կը հետեւի որ՝
արմատներն ալ ըստ կարելոյն երեսկուկ
եւ հորիզոնաձեւ գետեղուած ըլլալու են:
Հողը եթէ խորունկ փորուած ըլլայ, ար-
մատները հողին մէջ միտուելով, լայնու-
թեանը չեն տարածուիր, եւ հետեւաբար
քիչ բողբոջներ կ'արձակեն, որ միեւնոյն
անգամ ալ շատ բարակ կ'ըլլան: Տնկե-
ցէք ուրեմն մագիլները, առ առաւելն 5
հարիւրամէթ խորութեամբ, եւ արմատ-
ներն ալ տարածեցէք շտկելով հորիզո-
նաձեւ:

3. Ծնեբեկները տնկուած ատեն առա-
տօրէն աղբեցէք. որովհետեւ անոնք տուն-
կերուն մէջէն ամենէն աւելի որկրամոլ-
ներն են, եւ եթէ իրենց տրամադրու-
թեան տակ առատ սնունդ չ'ունենան,
գոհացուցիչ բողբոջներ չեն տար: Գրեթէ
ամէն անգամ որ ծնեբեկի մագիլները
տնկուած ատեն աղբը կ'ծծիութեամբ տը-
րուած է, շատ զգուարութեամբ բուսած
են անոնք: Մինչեւ իսկ զգալով սնունդի
պակասութիւնը. ուզէք վերջէն աղբել,
անօգուտ կ'ըլլայ. այս պարագային մէջ
աւելի խեղացութիւն ըրած կ'ըլլաք, եթէ
զանոնք փրցնէք հանէք, եւ իրենց տեղ
նորեր տնկէք:

Ղ. ԲՈԼԱՏ

(Շարունակելի)

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Կապերեցներու պահպանումը

Կապերտներու պահպանման վստահ ըլ-
լալու համար, — մանաւանդ գետինը դա-
մուածներուն — պէտք է տախտակամա-
ծին ճեղքուածներուն մէջ պանզին (ben-
zine) կամ քարիւղ լեցնել, կապերտին վը-
րայ եւս ձարձատիչով (Ֆիսքելյէ) մը պան-
զին սրսկելու եւ լաւ մը ծեծելու է, հոտը
չուտով կը ցնդի: Պանզինը դիւրաւառ
յատկութիւն մ'ունենալուն համար, այս
գործողութիւնը կատարած ատեննիդ,
զգուշացէք քովերնիդ բոցավառ կամ լու-

սաւոր նիւթեր ունենալէ, եւ աւելի աղէկը՝ ցորեկուան լոյսով ըրէք:

* * *

Խցանքները անբաժանելի բնի

Առէք Ձ մաս չի հալած մեղրամոմ եւ մաս մը հալած կովու ճարպ, լաւ մը իրարու խառնեցէք, խցանները Ձ անգամ այս խառնուրդին մէջը նետեցէք եւ փուռի մը մէջ չորցուցէք:

* * *

Ձեռքերու կարմրութիւնը անցնելու համար

Ձմեռը՝ ցուրտ օդին, երբ ձեռքերնիդ կարմրի, հացի միջուկը ջրով թրջեցէք, լաւ մը խառնեցէք, եւ այս խառնուրդը գործածեցէք օճառի տեղ ձեռքերնիդ լուսւոյ համար, եւ մաս մ'ալ ձգեցէք որ ձեր մորթին վրայ չորնայ: Շարունակ ձեռնոց գործածեցէք եւ երբեմն գայլխոտի (houblon պիրա չիչէյի) լուծողական մ'առէք:

ԱՐԱՔՍ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

—

Նրկրագործութիւնով սկսինք՝ որ մարդկային կենաց գոյութեան, բարւօք կենցաղավարութեան եւ զարգացման միակ աղտհովականն է, որ սակայն լքուած, թողուած, մարդկային ազգի ամենէն բազմամարդ, աղքատ եւ անուս դասակարգին ձեռքը, կը հեծէ եւ կը հիւծի, եւ այն փառքը, մեծարանքը՝ զոր կ'ընծայեն այդ հրապոյրներով լեցուած դաշտային կեանքին, երբէք գոյութիւն ունեցած չէ իրականութեան մէջ — մեծամասնութեան առջեւ աննշան կը մնան, եղածներն ալ արդէն այնչափ հազուադէպ են որ —:

Թողունք մենք Ներսիսի, որու երկրագործական վիճակը թէեւ դար մ'առաջ ինկած էր մերիկին պէս, սակայն այսօր անկարող ենք զայն մերիկին հետ բաղդատելու, մենք մերինը նայինք, որուն ձեռնադուլութեան կարօտը այնչափ

պէտք է, որչափ հազը մարդկային կենաց գոյութեան:

Նրկրագործութեան անկեալ վիճակի գլխաւոր պատճառը պիտի վերագրեմ ես սա գաղափարին, թէ շատեր այնպէս կը կարծեն որ այդ գաղափարը կը կայանայ միմիայն հերկել, ցանել եւ քողելուն մէջ:

Արդ՝ ասկէ գիւրին ի՞նչ կայ, ժամանակը եկաւ, կը հերկես. յետոյ կը ցանես, եւ ապա կը հնձես: Արհեստ մը, որուն գծուարութիւնը կը կայանայ ուրեմն միմիայն իր խստամբեր եւ տաժանելի կեանքին մէջ եւ այս պատճառաւ անով պէտք է զբաղին, արտասովոր կազմուած եւ բարեխառնութիւն ունեցողները: Բայց այնպէս չէ: Նրկրագործութիւնը՝ իր պարզ եւ խոնարհ դիրքին, իր խաղաղիկ դաշտերուն մէջ, ամենէն գծուարին ճարտարարուեստն է, որ իր յաջողութիւնը կը պարտի հանճարեղ վարչութեան մը, աշակից ունենալով իրեն գիտութիւնները: Դար մը առաջ, Արեւմտցիք ալ այնպէս կը կարծէին, եւ իրենց գոյութիւնը ապահովող այդ նուիրական արհեստը անձեռնհասներու թողած՝ անոնց հետ մէկտեղ իրենք ալ կը տատապէին, մերթ բերքերու անկանոնութենէն եւ անբաւականութենէն, մերթ եւս տարապայման սովերէ, սակայն խաղաղութեան վայրկեանի մը մէջ, անցեալ դարու գիտունները, իր բաժանակ ունեցան իրենց երկրի տնտեսագիտական խնդիրներով զբաղելու եւ երբ կը փորձէին, արհեստներու եւ վաճառականութեան զարկ մը տալով, երկրին հասոյթները աճեցնել եւ ժողովուրդը միանգամ ընդ միշտ ազատել անտոյգ վիճակէն, տեսան որ ատենք ամէնը գիւղատնտեսական գործառնութեանց կապուած են, եւ, առանց անոր, անկարելի պիտի ըլլայ, ձեռնարկած գործերնին գլուխ հանել. ուստի պարտաւորեցան նախ անով զբաղիլ, անոր յաջողութեան գաղաւթներուն խորը թափանցել, եւ վեր հանեցին ամէն ինչ, հաստատելով որ՝ երկրագործութիւնը ո՛չ թէ պարզ արհեստ մը, այլ մինչեւ իսկ մեծամեծ հանճարներու աջակցութեան կա-

բոտ Ֆէ ճարտարարուեստ մ'է, և իր յաջողութեան ապահովութիւնը կը գտնէ միմիայն գիտութիւններու բնական և հիմնական օրէնքներու գործադրութեան մէջ, ահա այն օրէնք երկրագործութիւնը պարզ և անուս գիւղացիին գրազու մը չեղաւ այլ եւս:

Դարուս Եւրոպական նշանաւոր և հազուագիւտ հանճարները անոր վարչութիւնը ստանձնեցին և լրջօրէն գրազեցան անով, իր գործառնութիւնները ամբողջ գիտական օրէնքներու վրայ հիմնելով: Մեքենագիտութիւնը, քիմիագիտութիւնը, բնախօսութիւն, երկրաբանութիւնի բուսաբանութիւն, կենսաբանութիւն, անասնաբուժութիւն, մանրէաբանութիւն և ի՞նչ գիտնամ տակաւին այս ութիւններու քառսին մէջէն քա՞նինք, մրցակցելով տարածեցին ամենուրեք աշխատութեան մէջ պարզութիւն, արագութիւն եւ հեշտութիւն, արտագրութիւնները զգալի կերպով բազմապատկեցին, և շատ պարագաներու մէջ ալ, պատրաստուած առարկաներու որակը կատարելութեան հասուցին, և այսօր հիացմամբ կը դիտենք Եւրոպացի երկրագործը, որ միւս արուեստագէտներուն հետ հրաշքներ կ'արտադրէ: Բայց երբ մենք կը փոփաքինք անոնց շաւղին հետեւիլ, երբ յօժարութիւն կը ցուցնենք մեր երկրագործական վիճակին բարգաւաճ ուղիւ թիւն մը տալ, միայն խօսելով և գրելով չէ որ պիտի յաջողինք, և այս գրութեանը ոչ թէ պարզ գիւղացիին, այլ ուսեալ, խելացի և լրջամիտ դասակարգին է որ կ'ուղղենք: Ծովը ինկած մարդ մը տալաւելու համար եզերքէն արուած խրատները ապարդիւն կը մնան, կ'ուզէք զայն վեր հանել, ծովը նետուեցէք, մօտեցէք անոր, բռնեցէք օձիքէն և դուրս հանեցէք, այս է գործնականը, հոս է կամքը: Ահա ասոր պէս ալ, կ'ուզէ՞ք որ երկրագործը յառաջդիմէ, օգնենք իրենց, մեր հանճարով, մեր կամքով, մեր գիտութիւնով և գործունէութեամբ օրինակ հանդիսանանք, և հասկցնենք գիւղացիին թէ, իր արհեստը շատ բարձր է, շատ վսեմ է,

թէ անիկա անուս մարդուն գրազու մը չէ, գիտութիւնը փորձառական գործնականին հետ մեծ դեր կը խաղան հոն, թէ քաղաքակրթութեան բարգաւաճումը երկրագործին յառաջդիմութեան կը կարօտի, թէ այս վերջինն ալ սերտիւ կապուած է քաղքենի ճարտարարուեստներուն. և իր յաջողութեան մէկ մեծագոյն մասը անոնց կը պարտի:

* *

Քաղքենի կեանքը միթէ արուեստական յերիւրանք մը չէ՞, ուր կեանքը տարապայման ձանձրոյթներու մէջ կը թարչամի, կը վատթարանայ:

Օտմանեան Վեհապանծ Պետութեան լուսամիտ Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Խանի նման հանճարեղ կայսր մը՝ պէտք էր որ իր հեռատեսութեամբ և հանճարով թուրքիոյ երկիրներու տնտեսական վիճակը բարգաւաճելու միջոցները վեր հանէր. հպատակասէր և հայրախնամ հոգածութեամբ մը, և երկաթէ կամքով գործադրել տար ինչ որ ժողովուրդին բարեկեցութեան կը նպաստէ, ինչ որ՝ ի մի բան՝ զթուրքիոյ յառաջդիմութեան և բարօրութեան մէջ կը դնէ: Նշանակելի օրինակ չի՞ հանդիսանար միթէ Օգոստափառ կայսեր հոգածութեանց:

Պոլսոյ և գաւառներու երկրագործական վարժարաններու հաստատութիւնը, նպատակ ունին ուսեալ և գիտական երկրագործներ հասցնել, և այդ նուիրական ճարտարարուեստն անուս դասակարգին ձեռքէն առնելով անոնց յանձնել, հոս սակայն ժողովուրդը սխալ ըմբռնում մը ունեցաւ, կարծելով թէ այդ վարժարաններու շրջանաւարտները Պետական պաշտօնեաներ ըլլալու սահմանուած են: Բայց ինչո՞ւ արդեօք կը հարցնեմ, բարեկամ, երբ մեծատարած ագարակ մը ունիս, որ հիամու վարչութեան մը աղեկացութեան տակ կը հիւծէ և միշտ կը վնասէ, ինչո՞ւ արդեօք զաւակդ չես զրկեր այդ վարժարաններէն մէկը, որպէս զի գիտութեամբ օժտուած գայ քու ստացուածքներուդ վարչութիւնը ստանձնել, և անով

քու փառքդ և նպատակդ շինես. տակաւին ասիէ 15 տարիներ առաջ շերամաբուծութեամբ զբաղողներ սնանկացած և վհատած իրենց թթենաստանները կ'ոչընչացնէին, ուրիշ մշակութիւններով զրաւ ղելու համար, մինչդեռ այսօր շնորհիւ Պուրսայի շերամաբուծութեան Պետական վարժարանին (*), այդ մասնաճիւղը կրկին կը սկսի իր տեղը գրաւել գիւղատնտեսական ճարտարութեան տնտեսութեան մէջ:

Պետութեան բարենպատակ ձեռնարկութիւններէն ժողովուրդը պէտք է օգտուիլ գիտնայ: Երբ Օսմ. կառավարութիւնը կը տեսնէ զրացի երկրագործ ժողովրդոց միջումը նորահար գործիքներու կիրարկութեամբ, Հայրախնամ հոգածութեամբ մը այդ երկրագործական մեքենաներու մաքսը կը ջնջէ, սակայն Պետական այդ շնորհէն շատ քիչեր օգտուած են ցարդ, որովհետեւ կ'ըսեն. Եւրոպական մեքենաները մեր հողերուն մէջ չեն բանիր... Սխալ, շատ սխալ, Եւրոպական գործիքները տեղին յարմար որոշել գիտնալու է նախ, և ապա գործածել. առաջին գաւառ իր երկրագործական քննիչը ունի Պետութենէն կարգուած, անոնք իրենց տաղանդով և արուեստով այսպիսի պարագաներու մէջ կրնան օգտակար ըլլալ ժողովուրդին, եթէ իրենց դիմում ըլլայ:

Հոս ալ հազուադիւր տնտեսաբանութիւններ են որ մերթ ընդ մերթ կ'օգտուին առիթէն: Երկրին յառաջդիմութիւնը միմիայն տիրող Պետութեան ձեռնարկներով չէ որ կ'ապահովուի այլ ժողովուրդին ձեռնաստութիւնը պէտք է, և այս՝ գլխաւորապէս իւր օգտին համար:

Արեւմտցիք իրենց երկրագործական ճարտարարուեստներու յառաջընթաց վիճակը կը պարտին մեծ մասամբ կատարելագործեալ գործիքներու կիրարկութեան, բայց ինչպէս ըսինք, անոնց ընտրութիւնը մասնաւոր փորձառութեան և հմտութեան պէտք ունի, մեր հողերու

մշակութեանց գրութիւններէն շատերը պէտք է փոխել, երբ կ'ուզենք զսննք գործածել. արդէն չընելնուս համար է որ, մեր հողերուն մէջ, անոնք չեն բանիր. կը տարակուսինք անոնց օգտակարութեան մասին. և այդ տարակուսանքին մէջ կը շարունակենք կոշտ ու կոպիտ գութաններով, կամ հնաւանդ արօրով հերկել, որոնց կատարած գործը անկանոն և անկատար ըլլալով հանդերձ, խիստ շատ անգամներ իրենց արտադրութիւնը շատ սուղի կը նստի մեզի, մենք սովորութիւն ունինք արօրով ցանելու: Եւրոպայի մէջ, մէկ կողմ թողունք սերմնացան մեքենաները, գիւղացիք առհասարակ, իրենց վարուցանք կը կատարեն մանկեռով (բլէ-նէ) առաջին միջոցով օրական 1 արտավար կը ցանեն, երկրորդով, միեւնոյն ուժով և մարդով՝ 15—20 արտավար: Մենք կը հնձենք մանգաղով կամ գերանդիով (բոփ, բոփ), օրական 1—2 արտավար, անոնք կը հնձեն համեմատաբար 20—25 արտավար, երբ հնձող մեքենային լծուած ըլլայ 30—40 արտավար երբ ձի լծած ըլլան մեքենային, աւելցուցէք ասոր վրայ աշխատութեան դիւրութիւն, արտադրութեան մաքրութիւն, եւ իսկոյն պիտի հասկնաք թէ, մեր ագարակաւորներու շատերուն սնանկութեան գլխաւոր պատճառներէն մին սա է, եւ ես ալ պիտի ըսեմ թէ այդ գործիքներու գործածութիւնը եթէ՝ չ'ընդհանրացաւ մեր մէջ. գլխաւոր պատճառը միայն անոնց կատարածը և մաշածը նորոգող արհեստաւորներ չունենալն է: Որովհետեւ շատեր տեսայ, սրունք քիչ շատ յառաջդիմասէր խելքի տէր ըլլալով, իրենց հեռատեսութեամբ գնահատելով նորահար գործիքներու արժէքը և անոնցմէ ծնելիք բազմաշատ աղէկութիւնները, մեծ եռանդով ձեռնարկած են իրենց մշակութիւնները, եթէ ոչ ամբողջութեամբ, գէթ մասամբ այդ գործիքներով կատարելու, բայց շուտով վհատած և իսպառ մերժած են անոնց գործածութիւնը, երբ կատարած մաշածը շինող արհեստաւորներ գտած չեն իրենց տրամադրութեան տակ:

(*) Որ յանձնուած է Թորգոմեան Գէորգ էֆէնտիի Տեսչութեան:

Եւրոպա, մեծամեծ դարբնոցներէ, մեքենատուններէ զատ, ամէն քաղաքի մէջ կը գտնուին պզտիկ գործանոցներ, որոնց մէջ թէ կը պատրաստուին կարգ մը գործիքներու նորերը, և շատերու ալ վերանորոգութիւնները կ'ընեն, և ամէն կարեւոր գեղի և քաղաքի մէջ ալ քիչ չատ խելահաս դարբին մը, փայտաքսի մը եւ այլն կը գտնուին, որոնք, ի պահանջել հարկին, կրնան մանր մունր նորոգութիւններ ընել: Մինչդեռ գաւառները, այն ալ քաղաքներու մէջ՝ հնամուլ գործարարներէն, պայտարէն կամ նաճաճէն (գաւառական բառ որ կը նշանակէ մարանկող) զատ՝ վարպետ արհեստաւորներ չունինք, ուրեմն՝ երբ կուզենք երկրագործութիւնը յծռալ տանիլ, պէտք է միեւնոյն ատեն իրեն հետ առնչութիւն ունեցող արհեստներուն ալ զարկ մը տալ, և ուղղակի իր մէջ սերող ճարտարարուեստներու վիճակն ալ բարեկարգելով, հաստատ հիմերու վրայ կանգնենք մեր ապրուստի աղբիւրները:

Ղ. ԲՈՒՍ

ՄԵՐ ԾԻԾԱՂԻ ԲԱԺԻՆԸ

Եթէ օրէնսդիր մը ըլլայի՝ կիներուն չափազանց պճնասիրութեան համար կ'առաջարկէի որ մէկ կնկան չորս էրկ տըրուի, անոր ծախսերուն կուրծք տալու համար:

Սիրահարները կ'երախէ չ'ունին:


Արդեօք ընդհանուրին շահը մասնաւորին շահուն չզոհելու սկզբունքն է որ կիներէն ոմանք իրենց ամուսինէն զատ ուրիշ անձեր ալ սիրելու տրամադիր կը գտնուին:

Ամուսնութիւնը այսօր թողորովին առեւտուրի կարգ անցած է. աղջիկներն ալ աղնիւ մարդէն աւելի աղնիւ ստակ կը փնտռեն:

Սէրը անանկ մանուկ մ'է որ խենդ է, կոյր է, փոփոխամիտ է, հաստատամիտ է, գթասիրտ է, շողոքորթ է. հրամեցէք պարոն մանկավարժներ, դաստիարակեցէք տեսնեմ այս տղան:

(Ծիծաղ)

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ



ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

Նարնջի ակում (իբր աղոմեղեր)

Առէք լաւ հասունցած 5—10 հատ նարինջ, կեղեւերով դրէք սանի մը մէջ եւ վրան լեցուցէք պաղ ջուր, որ ամբողջ գիշեր մը մնալու է այդպէս: Հետեւեալ առաւօտուն ուժով կրակի մը վրայ սանով ջուր եռացուցէք եւ նարինջները մէջը դրէք, ուր պէտք է վայրկեանի մը չափ մը նան, եւ յետոյ հանելով անմիջապէս պաղ ջուրի մէջ ձգելու է 10—15 վայրկեանի չափ: Հանեցէք այժմ նարինջները ջուրէն եւ շարեցէք մազի մը կամ պարզուտի մը վրայ մինչեւ որ լաւ մը ցամքին: Կռեցէք զանոնք եւ իրենց ծանրութեամբ շաքար առէք, հորիզոնաձեւ շերտ շերտ կտրեցէք նարինջները, եւ կամ ինչպէս ձեզի հաճելի ըլլայ, շարեցէք յարմար սանի մը մէջ կարգ մը նարինջ կարգ մը շաքար (անշուշտ շաքարը առաջուց ծեծուած ըլլալու է) մինչեւ որ հատնի, չափաւոր կրակի մը վրայ դնելով եփելու է. մերթ ընդ մերթ զգուշութեամբ շերտիով մը խառնեցէք որպէս զի սանին տակը չ'առնէ — ինչպէս կ'ըսեն խոհանոցի լեզուով —: Երբ լաւ մը եփի (առանց խվամի բերելու) սանը կրակէն վար առէք եւ ծակոտկէն շերտիով նարինջի շերտերը կամաց մը առնելով, ապակեայ բղուղներու մէջ շարեցէք. սանը նորէն կրակին վրայ դրէք եւ մէջի շաքարը թանձրացնելով (խլվամի բերել) վար առէք, առանց շատ պաղեցնելու քիչ մը հանդարտելէն վերջը բարակ պարզուտէ (սիւզկէճ) մը անցունելով, նարինջներուն վրայ լեցուցէք: Թողուցէք այսպէս մինչեւ որ լաւ մը պաղին բղուղները, յետոյ անոնց բերնին մեծութեամբ կտր եւ բարակ թուղթեր ալգոլի մէջ թաթխելով

սւղղակի անուշին վրայ դրէք. եւ իւրաքանչիւր բղուղին բերանը գոցեցէք ուրիշ հաստը թուղթով, որ պէտք է բարակ չուանով լաւ մը կապել:

ՏԱՆՏԻԿԻՆ

ԱՐՋԵՍՏԱԿԱՆ

Նրբակետ երկաթեղէն զործերու սահմանում երկաթները կախուղցնելու միջոց

Անգղիական լրագիր մը կ'ըսէ թէ, պէտք է երկաթը տաքցնել մինչեւ բաց կարմիր գոյն եւ պաղեցնել կակուղ օճառի մէջ (արապ սապօնը): Պաղեցնելու վերջը երկրորդ անգամ տաքցնելու է, եւ յետոյ կիրի փոշիի մէջ ծածկելով ձգելու է որ ինքնիրեն կամաց կամաց պաղի: Այս եղանակով, երկաթը կակուղնալով սքանչելապէս կռաններ կ'ըլլայ:

Պողպատը մխելու նոր միջոց մը

Մ. Լըվա անուն արուեստագէտը կ'ըսէ թէ, իմ առաջին փորձերս կատարեցի, առաջին տեսակէ եղող Հօլմըրի պողպատէ շինուած երկու գրոցներու (տէմիր գալէմ, քէսկի) վրայ: Առաջինը կեռասագոյն կարմիր տաքցնելով, պարզ ջուրի մէջ մխած է. իսկ երկրորդը միեւնոյն բարեխառնութեամբ տաքցնելով բենական թթուի (ասիտ ֆինիք) լուծման մը մէջ մխելով, ջուրէ քերած է կապոյտ գոյնի վրայ: Այս երկու գրոցները փորձած է նախ պարզ երկաթի վրայ, յետոյ խիստ կարծր ճերմակ ձուլածոյ երկաթի վրայ: ջրով մխուած գրոցին բերանը շարունակ կոտրտած է, մինչդեռ բենական թթուի լուծման մէջ մխուած գրոցը կատարեւապէս դիմացած է: Այսպէս չափ կարգի պողպատներու վրայ փորձելով, հաստատած է թէ բենական թթուի լուծման մէջ մխելով կ'ստանան ջուրէն աւելի կարծրութիւն, առաձգութիւն, եւ միեւնոյն անգամ կակուղութիւն:

ԱՐՈՒԵՍԱԳԵՏԸ

ՄԱՀԱԳՈՅԺԵՐ

ՔԵՐՈՎԲԷ ԷՖԷՆՏԻ ՓԱՓԱՋԵԱՆ

Առեւտրական դասը՝ շարժուս մէջ ցաւալի կորուստ մը ունեցաւ յանձին Քերովբէ էֆ. Փափազեանի՝ փեսայ Էնկիւ-

րիւի երեւելիներէն Յովհաննէս Էֆէնտի կիւլպէնկեանի:

Կիւլպէնկեան գերդաստանին անունը այնքան մօտիկ է աղբին սրտին, որ անոնց մէջ մի կորուստը հանրային վշտի մը կերպարանքը կ'առնէ:

Եւ արդէն հանրային համակրալից ցոյցի մը կերպարանքը առաւ յուղարկաւորութեան հանդէսը, ամէնքը կ'արտասուէին հէգ երիտասարդին համար, անի բարի սրտի տէր, բարոյականի վսեմ սկզբունքներով սնած ու մեծցած, աղքատներու պաշտպան եղած էր:

Ծնած Եօզկատի մէջ 1863ին, իր կըրթութիւնը ստացաւ Պէրպէրեան վարժարանին մէջ. աշխատութեան տիպար մ'էր և հրապարակին վրայ ուղղամիտ վաճառականի մը համարու ունէր:

Նրբեմն Մագրի-գիւղի Թաղական Խորհրդոյ և Ներկայ Տնտեսական Խորհրդոյ անդամ էր, և սատարած բարեգործական հաստատութեանց:

8 տարի առաջ ամուսնացած Յովհաննէս էֆ. կիւլպէնկեանի աղջկան Օր. Վերթինի հետ և կը թողու երկու անմեղուկ որբեր:

Հանգիստի խմբագրութիւնը իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ փափազեան և կիւլպէնկեան գերդաստաններուն:

ՏԻԿԻՆ ՇԱՋԻԿ Պ. ՓԱՓԱՋԵԱՆ

Մեր յարգելի աշխատակից և ժողովրդական բանաստեղծ Միհրան էֆ. Յովհաննէսեանի և վաճառականական դասակարգին ծանօթ եղող Մկրտիչ և Արմենակ Էֆէնտիներու մայրը Տիկին Շաջիկ չը կարողանալով՝ ճողովորի իր հիւանդութենէն մեռաւ շարժուս մէջ, խոր սուգի մէջ թողնելով իրենները և այն ամէն տանը որոնց օգնած էր մօր մը կատարեալ հոգածութեամբ: Պարկեշտ կին մ'էր Ողբացեալը, և միանգամ ազնիւ մայր մը, իր զաւակները, ամէնքն ալ փայլուն անուն կը կրեն ազգին մէջ:

Յուղարկաւորութիւնը Չորեքշաբթի կատարուելով վայելուչ չքով, մարմինը ամփոփուեցաւ Ծերի-գիւղի Անգղիացեաց գերեզմանատան մէջ:

Մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք Միհրան Յովհաննէսեան, Արմենակ և Մկրտիչ Փափազեան Էֆէնտիներու և համայն գերդաստանին:



ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՄԱՆՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՔԷ

Կ. Պոլիս Ֆևսիլեան խանի տակ թիւ 3
Սոյն վաճառատուն պատրաստ է մատա-
կարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝
ամէն տեսակ թարմ գեղօրայք, փրա-
բուժական գործիքներ, Անգղիական և
Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեակներ,
դիմիներ և հանքային ջուրերու մեծ
մթերք մը, յարմար գներով: Լ. Արման-
եան և Ս. Էմիրքէ Ըսկերութիւնը երկաշ-
ատեն անձնական փորձառութիւններ
ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն
խնայեր իրենց յաճախողներն գոհաց-
ներու համար, մասնաւոր ուշադրութիւն
կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց
կը զրկեն գեղօրայք, ամենայն արա-
գութեամբ, թարմ և մառչելի գներով:
Չարաճճի մրկներու և լուերու հէն.
համար միջատասպան փոշի Poudre in-
secticide մեծաքանակ բերել տուած են
ուղղակի Տալմայիայէն, որուն համար
մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւի-
րենք յարդոյ հասարակութեան:

Հասնելուկ 10 թիւ


Ես արարած եմ, բայց չնշաւոր չեմ,
Գործարանաւոր եմ՝ հոգի չունիմ.
Սիրտ երակ չունիմ, բայց կը բարակեմ.
Երգել չեմ գիտեր՝ աղւոր ձայն ունիմ:

Ինձ համար գիշեր ցերեկ՝ տարբեր չեն,
Եթէ գիտ մտնաս, քնանամ յաւիտ.
Կուզե՞ս որ մնամ միշտ արթուն եւ չէն,
Ինձ հոգ տանիլը մի հաներ մտքէդ:

Եթէ չ'գիտցար թէ ի՞նչ բան եմ ես
Օր մը ամբողջ իմ քովըս սպասէ,
Հաւաքէ կարգաւ ամբողջ ձայներս,
Գրիչդ ձեռք առ զանոնք գումարէ:

Ըսե՞մ թէ գտած գումարդ ինչ է,
Հարկը յիսուենք վեց աւելի է.
Թէ եւ ո՛չ զուրուշ եւ ո՛չ ոսկի է,
Բայց գիտցիր որ շատ սուղ եւ անգին է:

3. ԵԷԷԳԵԱՆ



ՀՈՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՍԳՈՒԼԵԱՆ

ձեյալ Պէլ խանի դրան կից, թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդար-
ձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ
ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն
կազմերը: Գաւառներու յանձնարարու-
թիւնները փութով և խնամով կը կա-
տարուին:

Չինական, Հնդկական, ճապոնի և Սէյ-
լանի էն ալնիւ թէյերն ուղղակի բեր-
ուած, կը գտնուին հոն:

Ձգուչանալ սոյն վաճառանիշին կեղ-
ծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍՍԳՈՒԼԵԱՆ
Ստորագրութիւնը:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏԲ Է ՊԱՐԵԼ

Բոլֆա, Բոլֆա-Մազուրֆա, Վալս, Ջօքի,
Բա-սը-Բաքոն, Բոլֆա-Քոուադէ,
Բա-սե-Բաքիմեոն, Բասիլ, Լանսիե
Ոսֆի ձեւերը 34 պահերներով քացատուած ե

Իր տեսակին մէջ այս առաջին գիրքը
կը ծաշուի Մէրճան փողոց, Մարգար-
եան Գրատունը և Պալի-Բաշա Պարոնեան
գեղարանը Հեղինակին քով:

Գին 5 զրուշ

Հանրագիտակի կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս :
Կը պարունակէ Գրական, Դիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական, Եւայլն, Եւայլն. շահեկան նիւթեր :

Երկրագործական, Արհեստական և Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով :

Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ

ՏՏՈՐԷՆ—Խմբագրապետ Ղ. ԲՈԼՍ

Կ. Պոլիս, Մահմուտ փառա, Բիւրքին խոն Արամեան Տպարան, բիւ 26

Թերթիս վերաբերեալ մնացեալ գործառնութեանց համար դիմել

Դրավանառ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՀՐԱՍ ԷՔԷՆՏԻԻ

Կ. Պոլիս, Մէրնան Զարգար բիւ 57

Հանրագիտակի պատրաստ է ընդունիլ ամեն տեսակ ծանուցումներ, ազդարարութիւններ, խիստ գիւրամատչելի պայմաններով : Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն զրկել երկու օրինակ, զոր պիտի ազդարարենք հաւարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը :

ՍԻԱԼ Ե ԸՍԵԼ

քէ՛ Պօզանէան ԷՔԷՆՏԻԻ Դ.Ս.Ս.Ա.ԳԻՐԲ
ԹՈՒՍ.ԳԻՏՈՒԹԵԱՆ անուն գիրք
ալ չի գտնուիր :

ՆՈՐ ՏՊՈՒԵՑԱԻ

հազարաւոր օրինակներ

Հարցուցէք Կ. Պոլիս, Մարգարեան գրատուն և ուղեցէ՛ք :

Դասագիրք Թուագիտութեան

ի պէս նախադրարանաց

Տ. ՊՕԶԱՃԵԱՆԻ

Դիմը 4 դրոս

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

ԶԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԶՆՆԱԿԱՆ մեքոսով

Զեւել և յօրինել

Դիմ 5 դրոս.

Հանրագիտակի կը ծախուի ամեն լրագրավաճառացիքով, մասնաւորաբար

Մագրի-Դիւզ, Պօզոս ԷՖ. Ազնաւորեանի խանութը :

Դատը-Դիւզ, Լեւոն ԷՖ. Զպուքճեան Դեղարանը :

Սկիւտար, Փիշթօֆճեան ԷՖ. ի խանութը :

Բերա, Դեմ փողոց Դառնիկ ԷՖ. Կիւլէրեանի խանութը :